ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ապրիլի 2012թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՄԱՔՈՒՐ ԱՋԱՓՆՅԱԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ՄԱՍՆԱԿԻ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Երևանի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման 3-րդ կետով, «Մաքուր Աջափնյակ» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական առողջացման նպատակով.

Երևանի ավագանին որոշում է.

«Մաքուր Աջափնյակ» փակ բաժնետիրական ընկերությանը մասնակի ազատել 2010 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից հաշվարկված և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի վճարումից՝ 4435.0 հազ. դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՔՈՒՐ ԱՋԱՓՆՅԱԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ՄԱՍՆԱԿԻ ԱՋԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի հ.240-Ա և Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 9-ի հ.2929-Ա որոշումների համաձայն «Մաքուր Աջափնյակ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2010 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած 27173.0 հազ. դրամի զուտ շահույթից 2011 թվականին Երևանի բյուջե պետք է վճարեր 5435.0 հազ. դրամի շահութաբաժին, սակայն վճարել է ընդամենը 1000.0 հազ. դրամ և պարտքը կազմում է 4435.0 հազ. դրամ:

2010 թվականի շահույթի առաջացումը պայմանավորված է վարկի մարման նպատակով Երևանի բյուջեից ՈԵԱՋՎՇ-5/1 պայմանագրի համաձայն հատկացված 39685.4 հազ. դրամ դրամաշնորհով: Համաձայն հ.V07-101642 և հ.V08-009164 վարկային պայմանագրերի երկարաժամկետ /18.01.2008թ. մինչև 12.09.2011թ./ վարկը տրամադրվել է մեքենա-սարքավորումների ձեռքբերման համար:

2010 թվականին ընկերության հիմնական գործունեության արդյունքներով /առանց դրամաշնորհի և վարկի տոկոսների գծով ծախսի/ հաշվեկշռային վնասը կազմել է 156.0 հազ. դրամ, իսկ ընկերության կրեդիտորական պարտքերը 01.01.2011թ. դրությամբ կազմել են 31.4 մլն. դրամ, ինչը 28.1 մլն. դրամով գերազանցում է 2.5 մլն. դրամ դեբիտորական պարտքերը և 0.8 մլն. դրամ դրամական մնացորդը:

2011 թվականին «Մաքուր Աջափնյակ» ՓԲԸ-ի տարեկան վնասը կազմել է 207 հազ. դրամ /համախառն եկամուտներ 265.8 մլն. դրամ և ծախսեր 266.0 մլն. դրամ/: Համախառն եկամտի մեջ ներառված է նաև տրանսպորտային միջոցների ձեռքբերմանը ուղղված երկարաժամկետ վարկի մարման համար Աջափնյակ վարչական շրջանի կողմից հատկացված 21.0 մլն. դրամ դրամաշնորհը: Հիմնական գործունեության արդյունքներով /առանց դրամաշնորհի և վարկի տոկոսների գծով ծախսի/ վնասը կազմել է 20.0 մլն. դրամ, որի արդյունքում ընկերության կրեդիտորական պարտքերը 01.01.2012թ. դրությամբ կազմել են 17.3 մլն. դրամ (հարկերի գծով 5.4 մլն. դրամ, սոց. վճարների գծով 1.9 մլն. դրամ, շահութաբաժնի գծով 4.4 մլն. դրամ, վառելիքի գծով 3.9 մլն. դրամ, պահեստամասերի գծով 1.5 մլն. դրամ, էլէներգիայի գծով 0.2 մլն. դրամ), իսկ դեբիտորական պարտքերը՝ 0.45 մլն. դրամ: 01.01.2012թ. դրությամբ ֆինանսական ճեղքվածքը կազմում է 16.1 մլն. դրամ /հաշվի

առած 0.7 մլն. դրամի դրամական մնացորդը/։ Անբավարար դրամական միջոցների հետևանքով ընկերությունը հնարավորություն չի ունեցել վճարել շահութաբաժնի գումարը։

«Մաքուր Աջափնյակ» փակ բաժնետիրական ընկերությունը 2012 թվականին Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի համաձայն տնտեսական գործունեություն է իրականացնելու մինչև հուլիսի 1-ը և ակնկալում է եկամուտների ստացում 144.8 մլն. դրամի։ Հաշվի առնելով 6 ամսվա կտրվածքով հաշվարկված ծախսերը, դրամական միջոցների ճեղքվածքը կազմում է 4.7 մլն. դրամ։

2012 թվականին դրամական միջոցները բավարար չեն տարեսկզբին առկա 17.3 մլն. դրամ, այդ թվում 4435.0 հազ. դրամ շահութաբաժնի գծով, կրեդիտորական պարտքերը մարելու համար։

Հիմք ընդունելով ընկերության ֆինանսատնտեսական ցուցանիշները, սանմաքրման և աղբահանության աշխատանքների իրականացման ապահովման առաջնայնությունը, ինչպես նաև այն, որ 2010թ. զուտ շահույթի առաջացումը պայմանավորված է կապիտալ ծախսերի /հիմնական միջոցների ձեռքբերման/ համար տրամադրված շնորհներով, ընկերության ֆինանսական առողջացման նպատակով առաջնորդվելով Երևանի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման 3-րդ կետով, առաջարկվում է «Մաքուր Աջափնյակ» փակ բաժնետիրական ընկերությանը մասնակի ազատել 2010 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից հաշվարկված և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի վճարումից՝ 4435.0 հազ.դրամի չափով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԱՔՈՒՐ ԱՋԱՓՆՅԱԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ՄԱՄՆԱԿԻ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մաքուր Աջափնյակ» փակ բաժնետիրական ընկերությանը 2010 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի վճարումից մասնակի ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում նախատեսվում է եկամուտների նվազեցում 4435.0 հազ. դրամի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԱՔՈՒՐ ԱՋԱՓՆՅԱԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ՄԱՄՆԱԿԻ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մաքուր Աջափնյակ» փակ բաժնետիրական ընկերությանը 2010 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի վճարումից մասնակի ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ